

8. Պատմաքրիան մատենագրութեան մի-
ջին եւ նոր դարոց յարեւմտաւ (2 հատոր).
տպ. 1874.

9. Մայր. (Թարգմ.). տպ. 1874.

Աստուծոյ դուրս ունի նա եւ ուրիշ թարգ-
մանութիւններ, ճառեր եւ մատենագրական
յօդուածներ, որք լոյս տեսեր են Բաղնիշի
հաստիքներուն մէջ :

Սակայն լոկ դրական վաստակներն չեն,
որովք փայլեցաւ Մեծ. Յորեւեարն, այլ մեզ
վանականացս համար՝ աւելի քան զայնս՝
իւր միաբանական եւ քահանայական կենաց
անխնջ վաստակքն են, որովք Ուխտիս բազմ-
արդիւն անձերէն մին եղած է : Տաճկա-
հայոցս կեդրոնին մէջ, ի էջ. Պոլիս, տա-
կաւին լուծ չէ համբաւն իւր օրինակելի ան-
ձնանուէր գործունէութեան, որով՝ շատ տա-
րիներ յառաջ՝ համաճարակ պատին անխնայ
շարդին ժամանակ՝ անվերջեր կը վազըր ամե-
նուն եւ ամէն տեղ, դարմանելու, սփոփե-
լու, գորացնելու օրհասականները էկեղեցւոյ
ս. խորհրդովք. եւ, դարմանք, մահն իսկ
կարծես պատկառեցաւ այգպիտի կեանքէ մի :
Ինչ աւելի մխիթարական բան՝ քան յիսնա-
մեայ կեանք մի, որ անդուզ գործեր է ի
փառս Աստուծոյ եւ յօգուտ իւր Ուխտին եւ
ազգին. ինեղով դաստիարակ եւ ուսուցիչ ի
վանս, քարագիշ, այցելու եւ գործակատար
յայլեալ տեղիս, քարտուղար եւ խորհրդա-
կան ի Միաբանութեանս 20—25 տարիներէ
աւելի. եւ այց բովանդակ ընթացքին մէջ
չունենալ ոչ մի ստգտանաց արժանի բան, ոչ մի
ստուեր կամ խայթ... նախանձելի կեանք :
Յարգելի՛ իւր բոլոր ծանօթից եւ միաբան
եղբարց՝ վարուքն, եւ ամենուն սիրելի՛ բա-
բուքն : Թէպէտ վերջին մի քանի տարիներուս
մէջ՝ մարմնով տկարացած, այլ մտօք՝ առողջ
եւ զօրաւոր, այնպէս որ՝ կարող էր դեռ
տարիներով շարժել իւր անխնջ զրելը, եթէ
հիւանդութիւնն օսաստիկ ծանրացած չլինէր
վերան :

Անա այսպիսի կեանք մ'է, որուն յիսնե-
րեանկը կը կատարէ Միաբանութիւնս :
Իմք.

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

ՌՍԿԱՐԱՅ ԵՒ ԳԵՐՄԻՒՂԱՅ

Ի նշո՞ն, որդիդ Ալբինայ,
աչացս առուն բանալ նորէն,
ինչո՞ւ կրրկին կու հարցնես
եթէ ինչպէս մեռաւ Ոսկար.
Արտունջնբուտ հեղեղ օսաստիկ
խաւարեցուց աչացրս լոյս,
Բայց աղետիցս յիշատակ
է՛ կեղտանի միշտ ի սրբտիս :
Ինչպէս պատմել այն առաջին
գիցագին մահն եղեռնաւոր.
Գրուէ մարտկաց, Ոսկար որդեակ,
ո՛չ կս ըզքեզ պիտի տեսնեմ :
Անհետացաւ գիշերային
աստղի նըման մըրըրկաց մէջ,
Նըման արեգական
երբ փոթորկին գոլ գոլ շողին
Ալեաց ծոցն կ'ելնէ պատել
ըզքարածայու Արգանիդայ :
Եւ ես իմ հիւզո կու թառամիմ՝
Մորվենայ ծեր կաղնւոյն նըման,
Որ մերկացեալ իւր օտտերէն
Թեթե շընչով կու տատանի :
Գլը՞նիս մարտկաց, որդեակ իմ, ո՛չ
կս այլ ըզքեզ պիտի տեսնեմ.
Քալըն շինար դաշտի խոտի
նըման, որդիդ Ալբինայ.
Մահուան գերանդոյն
կու նըմանի սուրն ի ձեռքին.
Նախ քան մեանիլ՝ կու կտորէ
և կու լափէ անթիւ զուռդեր :
Բայց դու, որդեակ սիրուն Ոսկար,
ինկար անշուք, անփառունակ-
Գեղարջնըզ քո կարմրացած
է արեամբ քու բարեկամիդ.
Ոսկար և Գերմիդ
ունէին մի սիրտ, մի հողի.
Կաղնւոյ պըսակներ
կու հընձէին մարտից ի դաշտ,

Սերս էր նոցա մտերմութիւն
 ինչպէս իրենց զբանին պողպատ,
 Մահըն միշտ կու քայլէր
 ի մէջ երկու այս մրտերմաց.
 Կ'իյնային ի թընամիս.
 ինչպէս երկու քարածայուեր
 կու փըրթին Արվենայ
 ճակատն : Անունըն լոկ իրենց
 Անվեներ մարտիկներն
 անգամ սաստիկ դեղընցունէր.
 Ո՛վ երբէք հաւատար
 Ոսկարայ, բայց թէ ինք Դերմիդ,
 Եւ ո՛վ երբէք զոյգ Դերմիդայ՝
 բայց թէ միայն նոյն ինքն Ոսկար :
 Մեռուցին զքաջըն Դարգոյ,
 Դարգոյ որ ոչ գիտէր փախչել,
 Գեղեցիկ էր իւր զըստրիկն՝
 իբր արեակըն նորածագ,
 Հեզիկ ինչպէս խաղող
 պայծառութիւնըն լուսնակին.
 Աշկունքն իւր կու փայլէին
 իբրի երկու Ղուխտակ աստղունք
 Որ անձրևոտ ամպի մ'ետե
 կեցած լոյսեր սփռուէն յորս զի :
 Էր շունչն իւր անշշակ
 քան ըզգեփիւռըն զարնայնոյ
 Եւ չըքնազ ծոցն օրիորդին
 քան ըզնորեկ ձիւնն՝ ըսպիտակ՝
 Որ կ'իջնէ ու կ'իջնէ
 կոհակաւէտ թըփոց վըրայ :
 Երկու զիւցազներն
 ըզնա տեսան և սքանչացան,
 իւրաքանչիւրըն կու սիրէր
 ըզնա՝ իբրև ըզփառքս իւր.
 Կ'ուզէր ըզնա ժառանգել
 իւրաքանչիւրն, և կամ մեռնիլ :
 Բայց գեղեցիկն սիրտըն կըզպաւ
 գեռափըթիթ Ոսկարին.
 Անոր համար միայն ըզգաց
 սիրոյ բոցերն իւր մէջ վառուած.
 Մոռցաւ չըքնաղն եթէ թափած էր
 նա զարիւնըն Դարգոյի,
 Սըրարբեալ ցանկութեամբ՝
 սեղմեց իւր հօր ըսպանոց ձեռքն :
 « Կարութեանդ, ըսաւ Դերմիդ,
 սիրեմ՝ ըզպատարըն Դարգոյի,

Այո՛, Ոսկար, կու սիրեմ՝
 զայդ կին կեանքէս աւելի :
 Իւր սիրտն առ քեզ կու բացուի,
 անբուժելի է, ո՛հ, իմ սէր,
 Ոսկար, ի՞մ սիրելի,
 զըթմացիր ինձ, տուր ինձ ըզմահ :
 — Որպեսք յիմարութիւն,
 և ի՛նչ Դերմիդ, միթէ կ'ուզե՞ս
 Որ իմ այս սուր ներկըի
 արեամբ իմոյ բարեկամիս :
 — Եւ ո՛վ այլ քան թէ Ոսկար
 է արծանի մարել զիմ լոյս.
 Կ'ուզեմ մեռնիլ խընդութեամբ,
 փառօք, մեռեալ ի քո ձեռքէդ.
 Ձի ապրիլ առանց սիրոյ
 անհրնարին է իմ՝ հոգոյս.
 — Շատ լաւ, ուրեմն, ա՛ռ Դերմիդ, սուրօ
 և պաշտպանուէ՛ քանդի կ'ուզես,
 Բայց աւազ, երանի
 թէ մեռնի հոս քեզի հետ,
 Երանի՛ թէ մեռնի
 ի ձեռանէ բարեկամիս » :
 Եւ կըռուեցան նոցա մտակ
 հեղեղատին Բրաննոյի.
 Կարմրացան փախըտական
 ալիք, մամուռըն գետափին.
 Դերմիդ մահացաւ
 վիրաւորուած վիրօք ինկաւ
 Ժըպտելոյ և նուաղկոտ ձեռքն
 առ բարեկամն երկրնցնելով...
 « Մեռնիս, որդիդ Դիարանի,
 և Ոսկար ինքն ըզքեզ մեռուց.
 Ո՛վ զուն՝ որ երբէք
 տեղի չտայիր ի պատերազմս,
 Համրկ է՝ որ զքեզ տեսնէ
 քու բարեկամն այսպէս մեռեալ » :
 Ըսաւ, և մեկնեցաւ
 Ոսկար տըխուր առ սիրունին.
 Դարգոյի զըստերէն
 ոչ ծածկեցաւ իւր տըխրութիւն.
 « Ոսկար, ըսաւ, զորոյալիւր,
 ս՛ր ամպ զհոգիդ մըթընցունէ :
 — Էի հըուկակաւոր,
 ըսաւ Ոսկար նետաձգութեամբ,
 Բայց այսօր կըսընցուցի փառքըս :
 Վահանըն Գորմուրայ

Քաջարոյն՝ զոր ըսպանի
մարտի մը մէջ ես այս ձեռամբ՝
կատուած էր մի ծառի վերայ
մտա բըլբուկին գետակին .
Ուզեցի զայն ծակել նետովս՝
բոլոր ճրգունքս ի զուր եղան :
— Շատ լաւ , բաւ չըքնաղն , և ես
կուզեմ՝ փորձել ճարտարութիւնս .
Եւ իմ՝ ձեռներս ուսան երբեմն
աղեղ լարել , աղեղ ձըգել ,
կու գուարճանայր հայրս տեսնելով
միշտ ի նպատակն հասած իմ նետ » :
Կ'ըսէ , շափէ զմիջոցն անդէն
և քընքուչ ձեռք լարեն զաղեղն .
Ոսկար վահանին
եակ փութայ ծածկըւելու .
Մահազոյժ սլաքքն շըչելով
ընդ օդ ըզսիրաւն կու ծակէ .
« Գեղեցիկ աղեղ , կ'ըսէ ,
ձեռք սիրունակ , շնորհակալ եմ .
Ո՞վ այլ որ բայց Դարզոյին
զուտոր արժանի էր ինձ մահ տալ .
Փըւէ՛ գիտ ի գետին ,
ցանկալից իմ , մտա մըտերմիս
— Ոսկար , Ոսկար , կու գող
արտասուալից , կոյսըն փափկիկ .
Քաջարին Դարզոյ ինձ
հաղորդեց իւր կորովութիւն .
Կըքնամ մեռնիլ ցընծութեամբ
և վերջ տալ իմ տառապանաց » :
Կըսէ կու մերկանայ
պատենէն զսուրըն Ոսկարայ
կու մըխէ և զողալով
կ'իյնայ գետին և կու մեռնի :
Կու նընջեն նոքա մէկտեղ
մտա բըլբուկին գետակին :
Յարասոյն շարժուն ըսուերըն
կու ծածկէ զիրեանց շիրիմս ,
Եւ այժեամն անտառատուն
գայ ճարակել թաւ թաւ խտեր
Երբ արևն այլէ զերկինք ,
և լըռութիւն տիրէ 'նգհանուր :

ՈՍՍԻԱՆ
Թրգմն. Հ. Ա. Ղազիկեան



Ա Կ Ն Ա Ր Կ Մ Ի

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՊՏԱՏ ՎԵՐԱՑ 1897 ՏԱՐԻՈՑ

Յ Ա Ն Ո Ւ Ա Ր . — Իտալացի գերեաց առաջին խումբն կը հասնի յիտալիա Ներացցի նիի հետ , որ Մենելիկի հետ խաղաղութեան դաշն հաստատեալ էր : Գէրվիշք կը սպառնան արեւելեան կողմէն Երիտրայի վրայ յարձակիլ : Վիզանոյ առջեւին կ'առնու , եւ փոխել կու տայ անոնց զիտաւորութիւնը :

— Փոսնկ-Տունուգեան դաշնադրութիւնն կը կնքուի , որուն համար իտալիոյ եւ Գաղղիոյ մէջ եղած յարաբերութիւնք բարւոքած կ'ըսուին :

— Լուծումն աւստրիական խորհրդարանին : Կոմս Գուլուխովիկի կ'երթայ ի Բեռլին . այս ուղեւորութեան քաղաքական կարեւորութիւն կը տրուի :

— Ի Գաղղիա՝ Մելինի Պաշտօնարանն կը յաղթանակէ ընդդէմ արմատականաց , Մոնմարտի ս . Սրտի տաճարին խնդրոյն մէջ :

— Սպանիական հեռագիրներու համեմատ , կուպայի մէջ զինուոց բախտն կամ յաջողութիւնն միշտ ի նպաստ Սպանիոյ է եւ հակառակ տպտամբաց :

— Մուրավիէի կոմսն կ'անուանուի « արտաքին գործոց պաշտօնեայ » , փոխանակ իշխան Լորանտիի :

ՓԵՐՐԱՌԱՐ . — Վենետիոյ մէջ բժշկական համաժողով մի կը զումարուի Հնդկաստանի ժանտախտին առջեւը առնելու հնարներ մտածելու համար , որպէս զի Եւրոպա շանցնի համաճարակ տխտն :

— Ռուզինի երեսփոխանաց ժողովը կը լուծէ , մարտի 31ին օրը կը սահմանէ նոր ընտրութեանց համախմբութիւնքը :

— Կրետէի մէջ մեծ պայթեցիկ սուսն կը ճայթի . կղզւոյն քրիստոնեայ ժողովուրդն